Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ *(2023-2024* ***ուստարի)***

12-**րդ դասարան** (**տևողությունը՝** 180 **րոպե**)

ա) Հայոց պատմություն *(20* ***միավոր)***

1. Ե՞րբ են Վանի թագավորության զորքերը արշավել Ալիշտու (Աղստևի հովիտ). 0,5 մ.
   ա) Ք.ա. 791 թ. բ) Ք.ա. 785 թ. գ) Ք.ա. 782 թ. դ) Ք.ա. 776 թ.
2. Ո՞վ է «Համառօտ պատմութիւն Աղուանից» աշխատության հեղինակը. 0,5 մ.
   ա) Զաքարիա Քանաքեռցի բ) Աբրահամ Երևանցի գ) Առաքել Դավրիժեցի դ) Եսայի Հասան-Ջալալյան
3. Ո՞ր քաղաքում էր գործում նշանավոր Մեսրոպյան վարժարանը. 0,5 մ.
   ա) Զմյուռնիա բ) Կոստանդնուպոլիս գ) Փարիզ դ) Վառնա
4. Ո՞վ «Հայկական լեգեոնի» կազմակերպիչներից չէ. 0,5 մ.
   ա) Արտաշես Աբեղյան բ) Գարեգին Նժդեհ գ) Դրո դ) Միսաք Մանուշյան
5. Ո՞ր թվականին է հիմնադրվել Շուշիի թեմական դպրոցը. 0,5 մ.
   ա) 1824 թ. բ) 1836 թ. գ) 1837 թ. դ) 1838 թ.
6. Քանի՞ զինվորից էր բաղկացած ուրարտական բանակի յուրաքանչյուր գունդ. 0,5 մ.
   ա) 1000 բ) 3000 գ) 5000 դ) 6000
7. Ո՞ր շարքի բոլոր քաղաքներն են Կիլիկյան Հայաստանի քաղաքական կենտրոններ (մայրաքաղաքներ).
   ա) Սիս, Լամբրոն, Անավարզա, Կոռոմոզոլ 0,5 մ.
   բ) Անավարզա, Կոռոմոզոլ, Սիս, Վահկա
   գ) Կոռոմոզոլ, Վահկա, Հռոմկլա, Սիս
   դ) Վահկա, Կոռիկոս, Անավարզա, Սիս
8. Ե՞րբ է ջախջախվել և Բագրատունյաց թագավորությանը միացվել Դվինի ամիրայությունը. 0,5 մ.
   ա) 987 թ. բ) 922 թ. գ) 948 թ. դ) 989 թ.
9. Ե՞րբ են ձերբակալվել և մահապատժի ենթարկվել Մանդալե եղբայրները: 0,5 մ.
10. Ո՞ր պատմիչն է ամենամանրամասնը նկարագրել շահ Աբասի կազմակերպած հայերի բռնագաղթը: 0,5 մ.
11. Ո՞ւմ դուստրն էր հայոց թագուհի Փառանձեմը: 0,5 մ.
12. Որքա՞ն էր ինքնապաշտպանության օրերին Ս. Առաքելոց վանքում գտնվողների թիվը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ըստ հիմնադրման ճիշտ հաջորդականության. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Արմենական կուսակցություն
    բ) «Սև խաչ»
    գ) Հայ հեղափոխական դաշնակցություն
    դ) «Հայրենիքի սիրո գրասենյակ»
    ե) «Հայրենասերների միություն»
    զ) Հնչակյան կուսակցություն
    է) «Բարենպատակ ընկերություն»
    ը) «Պաշտպան հայրենյաց»
    թ) «Միություն ի փրկություն»

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Անդրանիկ Օզանյան 2. Աղբյուր Սերոբ 3. Հրայր Դժոխք
    4. Գևորգ Չավուշ 5. Մխո Շահեն 6. Արաբո
    ա) Մկդենք բ) Կոռթեր գ) Մուշ
    դ) Շապին Կարահիսար ե) Սոխորդ զ) Ահարոնք

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթղթի քաղաքական բաժնում նշված էր, որ ՀԽՍՀ–ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի պատմության մեջ սկսվում էր Երրորդ հանրապետության շրջանը:
    բ) Հռչակագրում հատուկ հոդվածով ընդունվում էր ԽՍՀՄ օրենքների գերակայությունը հանրապետության օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ օրենքը հաստատված չէր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից, հանրապետությունում չէր գործելու:

գ) Ըստ Հռչակագրի՝ Հանրապետությունում ամբողջ գործավարությունը կատարվելու էր հայերենով և ազգային փոքրամասնությունների լեզուներով:
դ) Ըստ Հռչակագրի՝ երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լիներ մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները:
ե) Հայաստանի տարածքում հողը, ընդերքը, ձեռնարկությունները, ըստ Հռչակագրի, համարվում էին մասնավոր սեփականություն:
զ) Մինչև նոր Սահմանադրության՝ երկրի հիմնական օրենքի ընդունումը, Հռչակագրով պետության իրավական կարգավիճակը որոշող փաստաթուղթ էր համարվում ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը:
է) «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթուղթը կազմված էր 22 հոդվածից և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային, ռազմական զարգացման ուղիները:
ը) Հռչակագրով Հայաստանը հրաժարվում էր ԽՍՀՄ զինված ուժերի սպառազինության իր մասնաբաժնից, իսկ Հայաստանի պետական սահմանների պաշտպանությունն իրականացնելու էին ռուս սահմանապահները:
թ) Հռչակագիրը հաստատում էր ՀՀ վճռականությունը Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) Սարդարապատի ճակատամարտում Պողոս Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ կռվող զորամիավորումը Սարդարապատի ջոկատն էր:
բ) Զորավար Անդրանիկ Օզանյանի կազմակերպած 3500-հոգանոց զինուժը Հայկական առանձին հարվածային զորամասն էր:
գ) Առաջին աշխարհամարտի տարիներին Բալկանյան ռազմաճակատում Անտանտի զորքերի կազմում կռվող Արևելյան (Հայկական) լեգեոնի հրամանատարներն էին պորուչիկ Գարեգին Նժդեհն ու Անդրանիկը:
դ) Հայկական լեգեոնի և Արարատյան գնդի միավորումից ստեղծվեց Առանձին հայկական կորպուսը, որի հրամանատարը գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր:
ե) Մայիսի 22-ին Արևմտահայ խորհրդի որոշմամբ կազմավորվեց Արևմտահայ զորաբաժինը (դիվիզիա), որի հրամանատարն էր Պանդուխտը:
զ) 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի օրերին գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ կռվող զորամիավորումը Երևանյան զորախումբն էր:
է) Ռուսական բանակի գերագույն սպայակույտի՝ 1915 թ. նոյեմբերի 16-ի հրամանով Կովկասյան ճակատում ստեղծվել է առանձին հայկական զորամիավորում՝ Հայկական լեռնահրաձգային դիվիզիան, որի հրամանատարն էր Գայը:
թ) Արևմտահայերի առաջին համագումարն ընտրեց ղեկավար մարմին՝ Արևմտահայ ազգային խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը, իսկ պատվավոր նախագահ՝ Անդրանիկը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Հայոց ազգային բյուրոյի առաջադրած քաղաքական մերձավորագույն նպատակը հանգում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջին:
բ) Ստեղծվեց Հայոց ազգային բյուրոյի գործադիր (կարգադրիչ) մարմին՝ Հ. Արղությանի գլխավորությամբ:
գ) Հայոց ազգային բյուրոյի գործադիր կարգադրիչ մարմնի մեջ մտան Հ. Ջավարյանը, Ն. Դումանը, Արմեն Գարոն, Ավ. Ահարոնյանը, Ալ. Խատիսյանը, իսկ 1915 թ.՝ նաև Ռոստոմը:
դ) Կամավորական շարժման գլխավոր նպատակն էր իրականացնել հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը ԱՄՆ-ի հովանու ներքո:
ե) 1915 թ. կամավորներ եկան Ռուսաստանի ամենատարբեր վայրերից, Իրանից, Բալկաններից և ԱՄՆ-ց:
զ) 1914 թ. նոյեմբերի սկզբին արդեն ձևավորվել էին կամավորական չորս ջոկատներ:
է) Հայկական կամավորական չորրորդ ջոկատը, որը ձևավորվել է Սարիղամիշում, գլխավորում էր Քեռին:
ը) Պահեստային ուժերի հիման վրա կազմակերպվում է կամավորական V խումբը՝ Վարդանի գլխավորությամբ:
թ) Նորաստեղծ VI ջոկատի դրամական ապահովումն ու կամավորների հավաքագրումը ստանձնել էր Արմենական կուսակցությունը:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

1953 թ. մայիսի 30-ին ԽՍՀՄ կառավարությունը չեղյալ հայտարարեց (դենոնսացիայի ենթարկեց) 1925 թ. խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«... փոխադարձ համաձայնությամբ և կարճ ժամանակում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհները բացելու համար»:
ա. Ի՞նչ փաստաթղթից է մեջբերված հատվածը:
բ. Ե՞րբ է նախաստորագրվել այդ փաստաթուղթը:
գ. Որտե՞ղ էին ընթանում բանակցությունները:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Իր բնանկարներում ... -ի (1) է հարել Եղիշե Թադևոսյանը, ով զբաղվել է նաև ...-ային (2) ժանրով, դիմանկարով, վրձնել կրոնական և պատմադիցաբանական կտավներ՝ «... ...» (3), «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը» և այլն:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 12650 տարեկան է, քարի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Անտիկ շրջանում և վաղ միջնադարում ո՞ր պետական կազմավորումն էր գտնվում նրանից արևելք:

23. Հայ նշանավոր ո՞ր դերասանուհին է պատկերված. 0,5 մ.

24. Աշխատանք ծաղրանկարի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ի՞նչ ողբերգական առիթով է տպագրված նկարը (նշե՛ք կոնկրետ վայրը և գործողությունը):
բ. Ո՞ւմ վրա է գցում օսմանյան իշխանությունը դեպքերի պատասխանատվությունը:

Le Petit Journal

Le Petit Journal — CHAQUE JOUR — 6 PAGES — 5 CENTIMES — Administration : 61, rue Lafayette — Les manuscrits ne sont pas rendus

5 CENTIMES SUPPLÉMENT ILLUSTRÉ 5 CENTIMES

Le Petit Journal agricole, 5 cent. — La Mode du Petit Journal, 10 cent. — Le Petit Journal illustré de la Jeunesse, 10 cent.

On s'abonne sans frais dans tous les bureaux de poste

ABONNEMENTS

	SIX MOIS	UN AN
SEINE et SEINE-ET-OISE	2 fr.	3 fr. 50
DÉPARTEMENTS	2 fr.	4 fr. »
ÉTRANGER	2 50	5 fr. »

Vingtième Année — DIMANCHE 2 MAI 1909 — Numéro 963

MASSACRES DE CHRETIENS EN TURQUIE

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ւմ կոչով է սկիզբ առել Խաչակրաց առաջին արշավանքը. 0,5 մ.
ա) Ուրբանոս II բ) Ինոկենտիոս III գ) Կղեմես III դ) Գրիգոր VIII
2. Ո՞վ է Մեծ մողոլի կայսրության հիմնադիրը. 0,5 մ.
ա) Լենկ Թեմուր բ) Չինգիզ խան գ) Բաբուր դ) Աքբար
3. Ե՞րբ է խեթական արքա Մուրսիլիս I-ը գրավել Բաբելոնիան. 0,5 մ.
ա) Ք.ա. 1792 թ. բ) Ք.ա. 1750 թ. գ) Ք.ա. 1531 թ. դ) Ք.ա. 1513 թ.
4. Ո՞վ է շրջանառության մեջ դրել «Նոր աշխարհակարգ» հասկացությունը. 0,5 մ.
ա) Ռոնալդ Ռեյգան բ) Ջորջ Բուշ Ավագ գ) Բիլլ Քլինթոն դ) Ջորջ Բուշ Կրտսեր
5. Ի՞նչ էր կոչվում Ուսամա բեն Լադենի հիմնած ահաբեկչական կազմակերպությունը: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Պ. Պիկասո	2. Վ. Կանդինսկի	3. Ս. Դալի	4. Վ. Վազարելի
ա. աբստրակցիոնիզմ	բ. օպ-արթ	գ. կուբիզմ	դ. սյուրռեալիզմ

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 1961 թ. տիեզերք թռավ աշխարհում առաջին տիեզերագնացը՝ Յուրի Գագարինը:

բ) 1966 թ. Լուսնի վրա առաջինը վայրէջք կատարեցին երեք ամերիկացի տիեզերագնացներ:

գ) 1980-ական թթ. գիտատեխնիկական կարևոր նվաճումներից են միկրոպրոցեսորը, անհատական համակարգիչը, արդյունաբերական ռոբոտը և կլոնավորումը:

դ) Երկրորդ աշխարհամարտից հետո առաջին խոշոր համաշխարհային տնտեսական ճգնաժամը տեղի է ունեցել 1980-1982 թթ.:

ե) Համաշխարհային տնտեսական ֆորումի հիմնադիրն ու առաջին նախագահը Կլաուս Շվաբն է:

զ) Դասական միաբևեռ համակարգը վերացել է 1991 թ., երբ փլուզվեց սոցիալիզմի համաշխարհային կառույցը՝ ՏՓԽ-ն:

է) Իրանի նախագահ Մ. Խաթամին հանդես է եկել քաղաքակրթությունների երկխոսության գաղափարով, իսկ ավելի ուշ շրջանառության մեջ է դրվել «քաղաքակրթությունների դաշինք» հասկացությունը:

ը) 2015 թ. փետրվարին Ուկրաինայի արևելյան շրջաններում անջատողական շարժումներ սկսվեցին, իսկ 2016 թ. մարտին անցկացված հանրաքվեի արդյունքներով Ղրիմը միացվեց Ռուսաստանին:

1	2	3

8. Թվարկում և ընտրանք. 2 մ. (4 X 0,5 մ.)

ա. Թվարկե՛ք Հին Հունաստանի հայտնի քանդակագործներից 2-ին:

բ. Ընտրե՛ք հին հռոմեացիների կողմից առաջին անգամ կառուցված շինությունների տիպերից 2-ը. թատրոն, ջրանցք, սալահատակ, դամբարան, պարիսպ, տաճար, հիմնասյուն, ջրանցույց, բարձրաքանդակ, աղոթասրահ, հաղթակամար, բազիլիկ տաճար:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)



ա. Միջնադարյան և նոր դարերի ո՞ր պետական կազմավորումն է պատկերված գունանշմամբ Իտալիայի կենտրոնում:

բ. Իտալիայի միավորումից հետո ե՞րբ է օրենքով վերացվել նշված տարածքներում առանձին պետական իշխանությունը:

գ. Ե՞րբ է միավորված Իտալիան պայմանագիր կնքել և ճանաչել նշված տարածքի մի չնչին մասում առանձին պետության ինքնիշխանությունը (փոխադարձ ճանաչմամբ):

10. Ո՞վ է այս նշանավոր սրբապատկերի հեղինակը. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետության ղեկավարին է խորհրդանշում պատկերված արարածը:
բ. Ռազմաքաղաքական ո՞ր իրադարձության ժամանակ է ստեղծվել ծաղրանկարը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.03.2024 թ.